

» ըլլաս որ ինքը Գաղղիոյ մեծաշուք թա-  
» գաւորին Հենրիկոս երկրորդին, հա-  
» ճոյական և սիրելի անձ մըն էր. բայց  
» սակայն, ձախողակ բախտով մը՝ զէնք  
» առաւ ու մենամարտոնցաւ, ինքը որ,  
» առանց զինուց, իր թշնամոյն առջեւ  
» չէր խոնարհեր: Ո՞հ, չկայ աւելի մեծ  
» դժբաղդութիւն մը, և թշուառ վիճակ  
» մը, և իրաց գժնդակ յեղափոխու-  
» թիւն մը, ինչպէս մէկ մը, որ յաղ-  
» թուած կը համարուի, զինեալ ըլլա-  
» լուն համար, անդէն ըլլալով՝ ան-  
» յաղթելի էր: Զինուց արգելքն և  
» արուեստն այնպէս ուզեցին: կը պա-  
» տուիրեմ ուրեմն քեզի, աստուածնե-  
» րուն և մարդկան սիրոյն համար, ով  
» անցաւոր, Գաղղիոյ ծնունդ, որ չեմ  
» զիտեր ինչ թեթև պզտի կռուոյ մը  
» համար, ապերախտ մոռացութեան  
» չտաս այնչափ զինուորական զեղեցիկ  
» քաջութեանց յիշատակը, որոնց ա-  
» տենօք այս քաջասիրտ ասպետը կեն-  
» դանութեան ժամանակը այնչափ ցոյ-  
» ցեր տուաւ, իր թագաւորին և հասա-  
» րակաց բարւոյն համար ծառայելով:  
» Պէտք չէ որ բարի գործքերը մոռացուին՝  
» այնչափ թեթև բանի մը համար, և ոչ  
» այնպիսի ձախորդութեան մը համար:  
» Եւ որպէս զի կեղծեալ և առապելա-  
» կան բան մը չկարծես այս իմ ըստածս,  
» Լորենացի և Գաղղիացի մեծ իշխան  
» մը և շատ գերազանց ասպետ մը, այն-  
» պիսի անակնկալ պատահման մը վրայ  
» մեծապէս տրտմած և վշտացած, արի  
» և քաջասիրտ թուադուցի ասպետին  
» արդեանցը այս տապանը նուիրեց:  
» Տես, ողջ լեր, և մնաս բարեաւ:

Լաշաղէներըէյի և Ժառնաքայ մենա-  
մարտութիւնը Գաղղիոյ մէջ վերջին վա-  
ւերացած մասնական կոիւն եղած է:

ԹԱՐԳՄ. Ա. Մ.

ԱՇԱԿԵՐՏ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԿԱ:

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ  
ՆԱՄԱԿ ԱՌԱՋԻՆ  
—  
Յառաջաբան .

Յովհաննէս Մասէ բնապատում, ու-  
զելով կենդանաբանութիւնը բնախօսա-  
բար՝ պզտի տղայոց, և զիխաւորաբար աղ-  
ջըկանց հասկըցողութեանը մերձեցնել.  
գեղեցիկ կերպով և պարզ ոճիւ՝ նամա-  
կի կերպարանօք կ'աւանդէ զայն այսու-  
մակագրաւ. « Նամականի առ օրիորդ  
ունի մարդու և կենդանեաց կենացը  
վերայ » : Այնչափ հաճոյ անցած է այդ  
գրուածը՝ որ ոչ միայն շատ մը տպա-  
գրութիւնք եղած են նոյն բնագրին, այլ  
և յօտար լեզուս ալ վոխուած է : Մենք  
անոր օգտակարութիւնը և զօսալի  
երևոյթը ճանչնալով, ահա զիւրիմաց  
ոճիւ կը ջանանք մերազնեայց օգտին  
նուիրելու ամսական թերթերուս մի-  
ջոցաւ :

Սիրելի օրիորդիկ. քեզի շատ մը բա-  
ներու մեկնութիւնը տալու ձեռք կը  
զարնեմ, որոնք ընդհանրապէս հասկը-  
նալու շատ դժուար կը համարին, և մե-  
ծագոյն օրիորդաց շատ անգամ չեն սոր-  
վեցուներ: Եթէ այդ նպատակաւ երկուք-  
նիս համաձայնելով՝ յաջողինք պզտի  
զիխուդ մէջ զանոնք մտցնելու, ես իմ  
կողմանէս ինծի պարծանք պիտոր սե-  
պեմ, և զու փորձիւ սառւզես պիտի որ-  
շափ զրօսալի բան է ուսելոց գիտու-  
թիւնը՝ պզտի աղջկանց համար, թէ-  
պէտ և ուսենալք՝ ասոր հակառակ կար-  
ծիք ունենան երբեմն:

Հացի պատառի մը պատմութիւնը:  
Եթէ այդչափ է ընելու պատմութիւնս,  
անշուշտ պիտոր ըսես որ չաժեր աշխա-  
տանքի: Դու ալ ատոր նկատմամբ ինծի  
չափ գիտես, և ես պիտոր չսորվեցնեմ  
քեզի կարկանդակիկ մը խածնելու  
կերպը:

Բայց աղէկ, գիտնաս՝ որ և ոչ մողէդ  
կ'անցնին այն անհամար բաները՝ որ այդ  
բառին մէջ կը բովանդակաւին, և ինչ

մեծ հատոր կրնայինք դրել, եթէ ու զենայի մանրամասնաբար քննութեան առնուլ :

Երբէք հարցուցած ես քեզի թէ՛ ինչ չու համար մարդ կերակուր կ'ուտէ :

« Հոսկէց ծիծաղդ կը նշմարեմ :

Մարդ կ'ուտէ՝ վասն զի շաքարեղէն, կարկանդակ, քաղցրաւենիք, տանձ, խաղող, կակուղ հացիկներ և ամեն տեսակ աղէկ բաներ կը գտնէ՛ որ ուտելով հաճոյք կ'ընեն » : Հատ աղէկ պատճառ մըն է. և աւելի պէտք չկայ : Ա՛հ. Եթէ ապուրէ զատ ուրիշ բան չգտնուէր աշխարհքիս վերայ, թերևս կարելի ըլլար հարցնել. ինչո՞ւ համար :

Դնենք թէ աշխարհքս ապուրէ ՚ի զատ ուրիշ բան չգտնուիր : Եւ չեն պակաս անանկ խեղճ պղտի տղաք՝ որոնք ասկէ ի զատ ուրիշ բան չեն գտներ, որ և այնպէս կ'ուտեն և շատ ախորդով . այս բանին հայրն ու մայրը շատ անգամ աղէկ վկայ կրնան ըլլալ :

Ինչո՞ւ համար կ'ուտեն, նաև երբ ապուրէ զատ ուրիշ բան չեն գտներ :

Հիմա ես քեզի կը զուրցեմ եթէ չես դիտեր :

Անցած օրն որ մայրդ զուրցեց որ զգեստդշատ կարճցեր է, ու պէտք եղաւ նոր գեղեցիկ զգեստը շինել, որն որ այնչափ պարծանքով կը կրէիր առջի օրերը, ինչ պատճառէ առաջ կու գար այդ բանը :

— Աղւոր պատասխան . մեծցած ըլլալէս էր :

— Ի՞նչպէս ապա մեծցար, եթէ կը ներես հարցնելուս :

Ահա բոնուեցար : Ամենաստոյգ է որ քնացած ժամանակդ մէկ մը չէ եկած սրունքներդ երկնցնելու, և եթէ զգեստիդ թերը բազուկներուդ կարճ կու դային, չէ թէ անոր համար էր որ արմրէկ ներուդ վերայ կտոր մը աւելցուցին, ինչ պէս տախտակներ ստոլի մը կը յարեն՝ այն օրերն որ բազմութեան մը մարդոց կերակուր կ'ուզեն տալ : Ի վերայ այսր ամենայնի բան մը ինքնիրեն չմեծնար, և ոչ ալ ինքնիրեն կը պղտիկնայ . ատոր նկատմամբ ինքինքդ աղէկ մը համող-

ցուրք : Եթէ ուրեմն մէկ մը դրսէն բան մը չէ աւելցուցած, պէտք է որ խորամանկ ոգի մը ներսի դիէն մտուցած ըլլայ այն ամեն աւելին՝ որ թեերուդ, սրունիցդ և բոլոր մարմնոյդ վերայ յաւելեալ է : Եւ այդ խորամանկ ոգին դիտես ով է :

Դու ես :

Քուկին համեղ կարկանդակներդ են, քու շաքարեղէններդ, քաղցրաւենիներդ, ապուրն իսկ, և քան զամենն իսկ աղէկ ապուրն, անցողաբար ըսելու համար . այս ամենն են յիրաւի որ քեզի շատ ծանօթ պղտի անդընդին մէջ անյայտ ըլլալէն ետքը, սկսան, առանց քեզի հարցնելու, այլակերպիլ, և նենց գաբար սահելով թափանցել մարմնոյդ ամեն անկիւն ու խորշ, ուր կրցածնուն պէս եղան՝ ոմն ոսկը, ոմն միս, և այն և այլն : Ո՛ր դին կ'ուզես ինքզինքդ շօշափէ . միտ անոնք են որ կը գտնես, առանց զանոնք ճանչնալու, ստոյգ է : Քու պղտի վարդագոյն ըղունգներդ որ ամեն առտու աճած կը գտնես . քու խարտեաշ գեղեցիկ մազերուդ վարի ծայրերը՝ որ հետզհետէ զիսէդ ելլելով ալ աւելի կ'երկըննան, ինչպէս խոտ մը որ գետնէն դուրս կը պտկի . քու մեծ աղջկի ակուաներդ՝ որ արդ իրենց ծայրերը կ'երեցնեն, ու հետզհետէ կաթնաբոյծ ժամանակիդ հանած ակուաներուդ տեղը կը բռնեն . շատ ժամանակ չկայ բոլոր ատոնք կերաւ :

Այս քեզի համար : Խակ քու պղտի կատուդ որ քանի մը ամիս յառաջ անանկ նաղիկ էր, և հիմա կամաց կամաց մեծ կատու մը կ'ըլլայ, իր ամենօրեայ խիւն է որ հետզհետէ ներսի դիէն կատու կ'ըլլայ : Այդ մեծ եզր, որ այնչափ վախ կու տայ քեզի, վասն զի չես զիտեր որչափ աղէկ արարած է, և անկարող ամեննեին կարիք հասցնելու պղտի տղոց որ իրեն գէշութիւն մը չեն ըներ . այդ մեծ եզր՝ պղտի հորթ ըլլալէս կսած է, և իր կերած խոտն է որ վեր ջապէս անանկ մեծ զանգուած մնի փոխուեր է, զոր մարդիկ յետոյ պիտոր ուտեն՝ մարդկային միս ընելու համար :

Դեռ լաւագոյնը կայ : Մեր անտառաց

ծառերը, որ այնչափ կը բարձրանան և այնչափ միջոց կը գրաւեն, ի սկզբան՝ քու պղտի մատիդ չափ խոշոր չկային, և արդ նոյն այն բոլոր իրենց խոշորութեան նիւթը կերած են:

— Ի՞նչ. ծառերն ալ կ'ուտեն:

— Անտարակոյս, և ամեն աբարածէ ալ նուազ սակաւակեր չեն կրնար զուրցուիլ. վասն զի զիշեր ցորեկ անդադար կ'ուտեն, առանց կանկ առնելու: Միայն կրնաս գուշակել որ շաքարեղին չեն ծամեր, և թէ ուտելուն եղանակը մի և նոյն կերպով չըլլար ինչպէս ի քեզ: Եւ դարձեալ զարմանաս պիտի, առաջուց կ'իմացընեմ, երբ նշմարես բոլոր այն նմանութեան կէտերը՝ որոնցմով անոնք քեզի կը մերձենան այդ խնդրոյն նկատմամբ: Բայց քիչ մը ետքը ատոր վերայ պիտոր խօսինք:

Իրաւը տուր որ չկան շատ առասպելական պատմութիւններ որ աւելի հրաշալի երևոյթ ունենան քան զայն կարկանդակին պատմութիւնը, որ կը փոխուի կ'ըլլայ պղտի աղջիկ, քան զայն խիւսը որ կատու կ'ըլլայ, և քան զայն խոտը որ եղ կը ձեանայ:

Պատմութիւն կ'ըսեմ, վասն զի յիրաւի բոլորը պատմութիւն մըն է, և պէտք է մտածես որ այդ բանը մէկէն ի մէկ չըլլուիր:

Գուցէ լաճ ըլլաս այն զարմանալի մեքենաները, որ Անդղիա ի կիր կ'առնուն, որոնց մէկ կողմը բամբակը կապոց ըրած կը դնեն, և միւս կողմէն կը վերցնեն կ'առնուն զայն նրբագոյն հիւսուած եղած, կատարեալ ծալլուած, ծրարած, և պատրաստ վաճառականին ձեռքը անցնելու: Աղէկ. զու ներսդ ի քեզ ալ աւելի զարմանալի մեքենայ մը ունիս, որ քեզմէ կարկանդակը կ'ընդունի, ու կը փոխէ կու տայ քեզի զայն՝ ըղունդ, մազ, ոսկը, միս, և ուրիշ շատ բաներ, վասն զի մարմնոյդ մէջ հազար ու մէկ բան կայ որ ամենեին մէկ մէկու չեն նմանիր, և որոնք դու կը շինես ան դադար առանց գիտնալու: Եւ այդ շատ աղէկ բան է. վասն զի ինչ կ'ըլլային բոլոր պղտի աղջիկները՝ եթէ հարկ ըլ-

լար առտուընէ մինչև իրիկուն մտածել ինչ պէտք էր ընել իրենց մարմնոյն ներսը, ինչպէս իրենց մայրը բռնադատեալ է հոգալու այն ամեն բան որ տանը մէջ ընելու պէտք կայ: Ապահով եմ որ մայրերուն ալ փափագելի բան էր անանկ մեքենայ մը ունենալու, որ կարող ըլլայ սենեակները աւել, կերակուրը պատրաստել, պնակները լուալ, պատըռտած զգեստները կարել, ամեն բանի վերայ հակել, առանց աղմուկ հանելու, ինչպէս քու մեքենայդ որ կ'աշխատի քանի որ աշխարհք ես, և որուն վերայ հաւանականաբար ամենեին հոգ մը տարած չունիս:

Դու միայն չես որ ունիս այդ գիւթեալ մեքենայն: Քու կատուդ ալ մէկ մը ունի, եղն ալ նոյնպէս, նոյնպէս ալ ամեն կենդանի: Եւ ամենքն ալ մի և նոյն ծառայութիւնը կ'ընեն և մի և նոյն կերպով ինչպէս քեզի: Բոլոր այս մեքենաները մի և նոյն օրինակի վրայ շինած են, միայն այլ և այլ փոփոխութեամբ ըստ այլ և այլ կենդանեաց: Քիչ մը ետքը պիտոր տեսնաս որ այդ փոփոխութիւնները համաձայն են այն այլևայլ գործողութեանց որ ընելու սահմանեալ են իւրաքանչիւր կենդանւոյ մէջ: Օրինակի համար, եղան մէջ որ աշխատելու նիւթ՝ խոտը կուտայ, մեքենան մի և նոյն չէ ինչպէս կատուին մէջինը՝ որ միս կու տայ գործելու: Այսպէս մեր գործատանց մէջ բոլոր հիւսելու մեքենաները՝ մի և նոյն գաղափարով շինուած են. այլ մասնաւոր մէկ կարգադրութիւն մը կայ անոնց համար որ բամբակ կը հիւսեն, ուրիշ կարգադրութիւն մը անոնց համար որ բուրդ կը հիւսեն, և այլ դարձեալ անոնց որ կը տաւագործ են, և այսպէս հետզհետէ:

Եւ դարձեալ ուրիշ բան ալ կայ:

Հաւանականաբար ինքնիրենդ գիւտած պիտոր ըլլաս՝ առանց ուրիշներուն զուրցելուն, որ ամեն կենդանիք մի և նոյն առաւելութեանց կամ ձրից ընդունակ չեն: Օրինակի համար շունը, այն արթուն ու բարի կենդանին, որ մտածութիւնդ՝ աշուրներուդ մէջ կը կարդայ,

և որ իր տէրը անանկ կը սիրէ՝ որ շատ փափաքելի էր երբեմն պղտիկ տղաքն ալ իրենց ծնողը անանկ սիրէին, շունը՝ առանց ընդդիմութեան շատ վեր է գորտէն, խոչոր և ապուշ աշուրներով և պղտի լարձուն մարմնով կենդանիէն՝ որ մօտ գնացածիդ պէս ջրին տակը կը ծածկի։ Գորտը՝ որ ուզածին պէս կ'երթայ կու գայ, նմանապէս շատ վեր է քան զոստրէն, որ ոչ գլուխ ունի, և ոչ անդամ, և միսյնակ կ'ապրի իր խեցիին մէջ կպած, ինչպէս մշտնջենաւոր բանտի մը մէջ։

Սրդ՝ մեր ըսած մեքենան՝ հաւասարապէս կը գտնուի ոստրէին և գորտին մէջ, ինչպէս ի շունն։ Միայն աւելի նուազ կատարելութեամբ է ոստրէինը քան թէ գորտին, և գարձեալ նուազ կատարելութիւն ունի գորտինը քան թէ շանը։ Քանի որ հետզհետէ կենդանիէ կենդանին կ'իջնենք, բարձրագոյնէն ստորնագոյնը անցնելով, կը տեսնենք որ այս մեքենան ալ հետզհետէ իր կատարելութենէն կը նուազի, հոս իր մասերէն մէկը կը կորսնցնէ, հոն ուրիշ մը։ Միշտ մի և նոյն է. սակայն, վարերն հասնելով, մեծ գժուարութիւն զգայինք պիտի զան ճանչնալու, եթէ վերէն հետզհետէ զան պրապելու շրպայինք, եթէ՝ այսպէս ըսելու համար, իրեն հետզհետէ ճամբանը ըրած կորուստներուն ականատես եղած չըլլայինք։

Քեզի մէկ բազդատութիւն մը կ'ուզեմ ընել՝ որ լաւագոյն կերպով հասկընաս, եթէ զեռ ևս աղէկ հասկնալ չես կրնար։

Գիտես այն գեղեցիկ կանթեղը որ մայրդ գիշերը կը վառէ, որուն չորս դին կը ժողվուին աշխատելու համար։ Հանէնախ անոր լուսարգելը՝ որ լոյսը գործածներուն վերայ կ'անդրադարձնէ, յետոյ ապակին՝ որ անոր ծիսելը կ'արդելու, ապա պատրոյգին խողովակը՝ որ օդը բոցին մէջ տեղը կը կոչէ զայն աւելի պայծառ ընելու համար։ Հանէ յետոյ այնպատասակը որ պատրոյգը վերցընելու ու ցածցընելու կը ծառայէ։ Քակէ առանձին հատ հատ բոլոր կտորները,

մինչև որ ալ չման՝ բայց եթէ այն մասերը որ ամենէն էական են, այսինքն՝ ձէթին ընդունարանը և պատրոյգը՝ որ ձէթին մէջ կը վառի։

Եթէ այն ատեն մէկ մըներս մտնելով՝ « կանթեղս տեսէք »։ Ըսածդ լսելու ըլլայ՝ քեզի ըսէ պիտի։ « ինչ կանթեղ . ցուցածդ ամեննեին կանթեղի մը նմանութիւն չունի »։

Սակայն դու որ անոր իւրաքանչիւր կտորին իյնալրւն ականատես եղար, գիտես ըսելիքդ. և որչափ ան գլուխը շարժելով դժուարահաւատ ըլլայ, այդ պատրոյգը որ ձէթին մէջ կը վառի՝ միշտ քու առջիդ նոյն կանթեղը պիտոր ըլլայ. թէպէտ և կորսնցուցած ըլլայ բոլոր այն բաները՝ որ զինքը առաջ անանկ կատարեալ կ'ընէին, և ալ կարող չըլլայ առջինին չափ լցու տալ։

Ահա ուրեմն ինչ կը հանդիպի՝ երբ մեր մեքենան քննել կ'առնէ մէկը հետզհետէ բոլոր կենդանեաց վերայ մէկէն մէկալը ինջնելով։ Տգէտը՝ որ բոլոր այս փոփոխութիւններուս ականատես չէ եղած, չուզեր զան ճանչնալ երբ զայն վերջին ծայրը իրեն կը ցուցընեն. սակայն ով որ քննած է գիտէ որ միշտ նոյն այն է։

Ահա ուրեմն, սիրելի, այն ամենայն որ մէկտեղ պիտոր տեսնանք։ Նախ կտոր կտոր քննենք պիտոր այն գեղեցիկ մեքենան որ ՚ի քեզ ունիս, և քեզի այնչափ ծառայութիւններ կ'ընէ, այսու պայմանաւ որ իր ընելու գործէն աւելի աշխատութիւն չտաս իրեն։ կը հասկընաս ինչ կ'ուզեմ ըսել։ Ցեսնանք պիտի թէ ինչ կ'ըլլայ, բոլոր այս մասերէն անցնելով, այն հացի պատառը՝ որ հանդարտաբար ակուային տակը կը դընես, ինչպէս թէ՝ աս ընելով ամեն բան լմբննար, որուն ընթացքը քննենք պիտոր սկիզբէն մինչև վերջը։ Ուրեմն պարզապէս հացի պատառի մը պատմութիւններէ պէտք է որ քեզի ըսել կ'ուզեմ, նաև այն ատեն որ ուրիշ բանի հետ զբաղիլ երենամ. վասն զի զան հասկընալու համար, կը կանխեմ ըսելու, շատ մը մեկնութիւններէ պէտք է անցնիս։ Յետոյ մէկ

մոր կերածիդ պատմութիւնը աղէկ գիտնաս, քննենք պիտի կենդանեաց կերածին պատմութիւնը, սկսելով անոնցմէ որ քեզի աւելի կը նժանին, և հետզհետէ մինչև յետինը իջնելով։ Եւ երբոր հոն համնինք, համառօտ խօսքով մը նշանակենք պիտի ինչ կերպով կ'ուտեն բոյզք. վասն զի համաձայն ենք որ անոնք ալ կ'ուտեն։

Կը հաւտաս որ այդ բանին մէջ հետաքննութեանդ բաւական նիւթ կայ, և կ'արժէ որ քիչ մը միտքդ զբաղեցնես։

Թերեւս ըսես որ այդ շատ երկայն պիտոր երթայ, և թէ շատ ժամանակէ ի վեր է որ հացի պատառներ կ'ուտես առանց ամենեին փոյթ տանելու թէ ինչ կ'ըլլան, և այդ բանը մեծնալուդ ամենեին արգելք չէ եղած, ինչպէս նաև և ոչ կատուիդ՝ որ ամենեին հոդ չըներ։

Այս, սիրելի օրիորդիկ. սակայն պըզտի կատուն՝ պզտի կատու մըն է, իսկ դու պզտի աղջիկ մըն ես։ Մինչև հիմա դու ալ ան ալ նոյնչափ տեղեկութիւն ունէիր այդ զիսոյն նկատմամբ, որով դու իրմէն վեր չէիր։ կատուն երբէք հոդ չպիտոր տանի ատոր համար, որով և միշտ պզտի կատու մը պիտոր մնայ։ Զքեղ Աստուած սահմաներ է որ եղածէդ աւելի ըլլաս, և միայն պզտի կատուին չգիտցածը սորվելով է որ կարող պիտոր ըլլաս անկէ վեր ելլելու։ Սորվիլը՝ մեր ամենուս պարտքն է, ոչ միայն հետաքրքրութեան հաճոյքին և զիտուն ըսուելու մնապարծութեանը համար, այլ անոր համար որ հետզհետէ քանի որ մարդ կը սորվի, ալ աւելի կը մերձենայ այն նպատակին որուն համար Աստուած ստեղծած է զմարդ։ և երբ հլուաբար կը քալէ մարդ այն ճամբէն որ Աստուած ինքն մեզի ցուցեր է, ի հարկէ որ լաւագոյն կ'ըլլայ։

Երբեմն մեծ մարդոց կը զուրցուի որ սորվելու համար ժամանակը ոչ երբէք ուշ է. տղոց ալ ուրեմն կը նայ զուրցուիլ որ սորվելու համար ոչ երբէք կանուխ է։ Այն բաներուն մէջէն որ կը նան սորվիլ, անոնք որ ես կ'ուզեմ սորվեցնել քեզի՝ կը կնապէս յարգի են, մէյ մը որ

զուարծալի են, մէկ մ'ալ և զլխաւորաբար քեզ կը վարժեցնեն զլխաւուած մըտածելու, անոր ըրած հրաշալիքները. քեզի ճաշցընելով։ վստահ եմ որ երբ անոնց աղէկ ծանօթանաս, գոհ պիտոր ըլլաս, և մօրդ խօսք կու տամոր աղէկ պիտոր զգաս ինքզինքդ։

Կը շարունակուի։

## ԽՄ ՎԱՆՔԸ

Դրաբեկանի մը անտիպ յիշատակագիրք։

(Տես Երես 134)

Թէպէտև առաւօտեան ժամերը յառաջ զացեր էին, բայց ես չէի կրնար որոշել երթալու. անկարելի էր այն ինծի համար իրաւցնէ ճակատագրական տեղը թողուլ։ Դրան փակաղակին վերնալը լսեցի. և սիրտս ուրախութեան յուսով լցուեցաւ։ Մինչդեռ ձեռքս վերցնելու և զարնելու վրայ էի, և ահա դուռը բացուեցաւ, և քանի մը միանձունք դուրս ելան։ Անոնց ետևն էր այն սովորական եղբայրն՝ որ զիս ներս մտուցեր և դուրս հաներ էր։ Ճեսնելուս պէս զինքը՝ ըսի մէկէն, բարի լցոյս, եղբայր։

Ինքը զիս զեռ հոն տեսնելով զարմանքի կերպ մը ցըցուց. բայց լուութեան խիստ կանոնը, զոր զրաբեանը խղճահարաբար կը պահէ, չթողուց իրեն խօսքով յայտնելու զայն։ Բայց հասկցայ որ ակնարկութեամբք կ'ուզէր հարցընել թէ ինչո՞ւ զեռ հոն եմ։ Ես պատասխանեցի. Դեռ հոս եմ, և պիտի չշարժիմ ասկէց։ Թէ որ արբան չուզէր զիս մենաստանն ընդունել, ես միշտ դրան քովը պիտի կենամ։ կը յուսամ որ անօթութենէ չմեռնելու համար գէթ պատառ մը հաց կու տայ ինծի։ Ինչ և իցէ կերպով ըլլայ, թէ զուրսը թէ ներսն ըլլայ, ես կ'ուզեմ Դրաբային մէջ ապրիլ ու մեռնիլ։ Ազնիւ ծերուկը վերուց աչքերն երկինքը, ձեռքովը սիրալիր ողջունեց զիս, և դուռը զոցեց նորէն։